ԱՐԹՈՒՐ ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ (1991-2008թթ.)

1991թ. դեկտեմբերին ԳԴՀ-ն պաշտոնապես ճանաչեց ՀՀ անկախությունը և 1992թ. հունվարին երկու երկրների միջև հաստատվեցին դիվանագիտական հարաբերություններ: ԳԴՀ-ն միջազգային քաղաքականության գործընթացների վրա ազդող լուրջ պետություններից մեկն է, ուստի նրա հետ բազմապիսի և բազմաբնույթ փոխհարաբերությունները քաղաքական, գիտական, ռազմավարական, կրթամշակութային և այլ ոլորտներում կարևոր է ՀՀ-ի համար միջազգային լայն ասպարեզ մտնելու նպատակով: Երեք երկրների միջև հարաբերությունները զարգանում են վերելքի ուղիով:

Հայտնի է, որ Գերմանիան վերամիավորումից հետո արտաքին քաղաքականության հենքը դրել է տնտեսական առաջընթաց ապահովելու խնդրի վրա, ուստի այդ առումով կարևորվում են հայ-գերմանական տնտեսական հարաբերությունները, որոնց շարժիչ ուժերից են համատեղ՝ հայ-գերմանական և զուտ գերմանական ընկերություններ:

Անդրադառնալով Գերմանական Դաշնային Հանրապետության կողմից Հայաստանում կատարած ներդրումներին պետության և մասնավոր ընկերությունների միջոցներով Հայաստանում ԳԴՀ դեսպան Անդրեա Վիկտորինը Գերմանիայի միասնության 17-րդ տարեդարձի կապակցությամբ 2007թ. հոկտեմբերի 3-ին իր ողջույնի խոսքում ասաց. «Սեպտեմբերի 11-ին և 12-ին Երևանում կայացան միջկառավարական բանակցություններ, որոնց արդյունքում հայկական կողմին հատկացվեց 79,5մլն եվրո արժողության միջոցներ[1]: Այսպիսով, զարգացման համագործակցության ոլորտում գերմանական աջակցության ողջ ծավալը Հայաստանին անկախացումից հետո կազմում է մոտ 265մլն եվրո»[2]: Այնուհետև դեսպանը հավելում է. «Ոչ միայն գերմանական պետությունը, այլև Գերմանիայի շատ քաղաքացիներ իրենց մասնագիտություններով մարդասիրական ծրագրեր են իրագործում Հայաստանում»:

Գերմանական քաղաքացիներն իրենց ներդրումները Հայաստանում չփոշիացնելու և նրանց ապահովածության առավել երաշխավորված դարձնելու նպատակով միավորվում են, կազմելով ընկերություններ[3]:

«SchЖco» (Շուկո) ընկերությունը, որը ստեղծվել է 1951թ. իր գործունեությունն սկսել է ցուցափեղկերի և ալյումինե ֆասադային մասնիկների

---

[1] «http://www.panorama.am/am/economy/2007/09/12/germania/».
[2] «Հայաստանի Հանրապետություն», 13 սեպտեմբերի 2007թ.:
[3] Հայ-գերմանական տնտեսական հարաբերությունների մասին տես «Հայաստանի Հանրապետություն», 22 հունիսի 2004թ.:

արտադրությունից: 1970-ական թվականիններին ընկերությունն ընդլայնում է իր գործունեությունը Եվրոպական երկրներում, շարունակել է իր հզորացման միտումը և արդեն 2006թ. ունենալով աշխարհում 4700 աշխատակիցներ, կատարում էր մոտ 1,6մլրդ եվրոյի շրջանառություն[4]:

Ընկերությունը ժամանակակից կառույցների համար ապահովում է էներգետիկայի ծախսման արդյունավետությունը, շենքի ներսում միկրոկլիմայի, շրջապատի բացասական ազդեցությունից՝ շոգից, աղմուկից, արեգակնային ճառագայթներից պաշտպանելիությունը:

«SchÞco»-ի ապրանքատեսականին ընդգրկում է շինարարական նյութերի ողջ համակարգը: Տեղում ընկերությունը հայ սպառողին է ներկայացնում այդ համակարգի բոլոր նյութերը: Նրա գրասենյակը գործում է Երևանի Ամիրյան N 3 հասցեում[5]:

Հայաստանի համար նշանակալից է նաև (WÞrth Group) Վյուրտ գրուպի ծառայությունը, որի հայաստանյան մասնաճյուղի 10-ամյա գործունեության հոբելյանական տարում՝ 2007թ. հոկտեմբերի 18-ին կայացել է այդ առթիվ հանդիսավոր արարողություն, որին ներկա է եղել ընկերության հոգաբարձուների խորհրդի նախագահ տիկին Բեթինա Վյուրտը[6]:

Ընկերությունն իր գործունեությունն սկսել է նախ Երևանում 1997թ. հոկտեմբերին, ապա ընդգրկել է նաև Շիրակի և Լոռու մարզերը, իսկ 2007թ. նաև Սյունիքում[7]: Նա իր նպատակասլաց և խոհեմ գործունեությամբ կարողացավ կայուն դիրքեր ունենալ Հայաստանում, որպես լուրջ մրցակից՝ նրա շուկայում, հայ սպառողին ներկայացնելով շինարարության, արդյունաբերության, մետաղամշակման, փայտամշակման, սննդի և խմիչքի արտադրության բնագավառում օգտագործվող բարձրորակ ապրանքներ2007թ. հոկտեմբերի վերջին հայ սպառողին է տրամադրել WOW (WÞrth Online World) մեքենաների դիագնոստիկ և տեղեկատվական համակարգը[8]:

«Siemens AG» (Բեռլին և Մյունխեն) ընկերությունը համաշխարհային առաջատարն է էներգետիկայի և էլեկտրոտեխնիկայի բնագավառներում: Այն հիմնադրվել է 159 տարի առաջ (հաշված 2007 թվականից): Ներկայումս այն աջակցում է 190 երկրների իր պատվիրատուներին[9]:

Կոնցեռնի գործունեության ոլորտներն են ինֆորմատիկան և կապի միջոցները, ավտոմատացման և վերահսկման համակարգերը, էներգետիկան,

---

[4] «Ազգ» (Հավելված), 3 հոկտեմբերի 2007թ., էջ 6:
[5] Տե՛ս ավելի մանրամասն տեղեկություններ www.schueco.am կայքում:
[6] «Ազգ» (Հավելված), 3 հոկտեմբերի 2007թ., էջ 6:
[7] «Ազգ» (Հավելված), 1 հոկտեմբերի 2005թ., էջ 6:
[8] Հասցե՝ ք. Երևան, Աշտարակի խճուղի 2/2(գլխավոր գրասենյակ), հեռ.՝ 39-53-47, 39-53-48, ֆաքս՝ 39-52-37, էլ.փոստ՝ info@wurth.am:
[9] Հասցե՝ ք.Երևան, Ազաթանգեղոս 2ա, 4-րդ հարկ, հեռ.՝ 58-72-80, ֆաքս՝ 56-22-75, էլ.փոստ՝ norayr.khachatryan@siemens.inter-as.com:

տրանսպորտը, բժշկությունն ու լուսատեխնիկան:

1998թ. Երևանում բացված ընկերության ներկայացուցչությունը հաջող գործունեություն է ծավալում հետևյալ 4 ուղղություններով. էներգետիկա (գեներացում, էներգիայի փոխանցում և բաշխում), գործընթացների ավտոմատացում և բուժտեխնիկա:

Այսօր Սիեմենս PG բաժինն առաջարկում է իրականացնել էներգիայի արտադրություն ոչ ավանդական ձևերով. դրանցից է հողմաէներգիան,արևի էներգիան, վառելիքային տարրը:

Հայաստանի Հանրապետությունը, վերջին 2006-2007թթ. հետաքրքրություն է ցուցաբերում դիագնոստիկ նոր սարքավորումների նկատմամբ: Երեբունի, Նաիրի և Արմենիա հիվանդանոցները ձեռք են բերել ուլտրաձայնային, անգիոգրաֆիկ հետազոտման ապարատներ, համակարգչային տոմոգրաֆիայի և մագնիսառեզոնային սարքեր: 1997թ. հոկտեմբերի 1-ից իրականացվեց արդյունաբերական բաժինների վերադասավորում՝ արդյունքում ստեղծվեց նոր բաժին ավտոմատացման և շահագործման տեխնիկա (A&D) անվամբ, որը կարող է հասնել ցանկացած խնդրի համալիր լուծման:

Հայաստանում է գործում Tyco Electronics-ը ներկայացնող էներգոընկերությունը 2007թ. նոր ծրագրով և համագործակցությամբ, 2007թվականից «էներգո» ընկերությունն իրականացնում է էլեկտրոնիկական համակարգերի վերազինման ծրագրեր «Քաջարանի պղնձամոլիբդենային կոմբինատի» հետ: Այդ ծրագրի շրջանակներում կառուցվել են 40 ՄՎԱ հզորությամբ երկու ենթակայան, բացի այդ ընկերությունը «Հայաստանի էլեկտրական ցանցեր» (ՀԷՑ) ՓԲԸ-ի հետ ավարտել է Ծաղկաձոր քաղաքի էներգոմատակարարման համակարգի արմատական վերակառուցումը: 2006թ. ընկերության մասնաճյուղի վերոհիշյալ կազմակերպության հետ իրականացրել է պիլոտային ծրագրեր:

Այն, ըստ «Wall Street Journal»-ի, 100 համաշխարհային խոշորագույն ընկերություններից 38-րդն է շուկայում[10]: Նա ունի 79մլրդ դոլարի ծավալ, էներգետիկայի մասնաճյուղում այժմ աշխարհում 3400-ից ավել աշխատող է 1մլրդ 380հազար ԱՄՆ դոլարի տարեկան վաճառքի գերազանցումով[11]:

Հայաստանում հաջողությամբ է գործում AREVA T&D-ի դուստր ձեռնարկությունը (AREVA Energietechnik GmbH): Նա էլեկտրոտեխնիկայի բնագավառում գործող համաշխարհային ճանաչում ունի: Նրա գործունեության շրջանակներում են բարձր և միջին լարման սարքավորումները, տարբեր տեսակի տրանսֆորմատորները, պաշտպանության և վերահսկման սարքերը, SCADA համակարգերը, տարբեր լարումների կայանները[12]:

---

[10] «Ազգ» (Հավելված), 3 հոկտեմբերի 2006թ., էջ 6:
[11] «Ազգ» (Հավելված), 3 հոկտեմբերի 2007թ.:
[12] AREVA T&D-ի և Tyco Electronics-ի հասցեն է՝ ք. Երևան, Թումանյան 11, հեռ.՝ 54-21-22, ֆաքս՝ 58-20-60, էլ.փոստ՝ imfo@yerenergo.am:

Այսօր հաջողությամբ շարունակվում է Քրոնիմետի գործունեությունը Հայաստանում, որի անունից Հայաստանում գործում է «Քրոնիմետ Մայնինգ» ՍՊԸ-ի ներկայացուցչությունը Երևանում:

«Զանգեզուրի Պղնձամոլիբդենային Կոմբինատ» ՓԲԸ-ն գտնվում է Քաջարան քաղաքում: Այն արդյունաբերող ու վերամշակող ձեռնարկություն է: Նա ունի ավելի քան 2600 աշխատող: Գերմանական «ՔՐՈՆԻՄԵՏ» խումբը գլխավոր բաժնետերն է, ամենամեծ մասնավոր գործատուն և ներդնողը Հայաստանում[13]:

ՀՀ կառավարությունը կոմբինատին պարգևատրեց «Ոսկե Աստղ»- ով, մի պարգև, որ տրվում է արտադրության հատուկ բարձր ստանդարտներ ձեռք բերելու համար: Նա օգնում է աշխատանքի և կյանքի պայմանների բարելավմանը միաժամանակ դպրոցների և սպորտային դահլիճների վերանորոգմանն ու պահպանմանը, խթանում սոցապահովության, բժշկության և մշակութային հաստատությունների ծրագրերի իրականացմանը: Բացի այդ «ՔՐՈՆԻՄԵՏ» խումբը Հայաստանում ունի «Մաքուր երկաթի գործարան»[14]:

Գյուտեր Պիլարսկին, ով «ՔՐՈՆԻՄԵՏ» խմբի հիմնադիրն ու ղեկավարն է իր մեծ վաստակի համար 2006թ. նոյեմբերին Քադեն-Վյուրթեմբերգի երկրամասում նշանակվեց Հայաստանի Հանրապետության հյուպատոս[15]: Նա Հայաստանի առաջին և հիմիկվա միակ պատվո հյուպատոսն է ԳԴՀ-ում՝ նստավայրը Կարլսռուհե քաղաքն է[16]:

Ուշագրավ է Սյունիքեն-Երևան-Սյունիքեն ավիաչվերթի նախապատմությունը, 1955թ. ապրիլի 1-ին օդ է բարձրանում LH104 Ֆրանկֆուրտ-Սյունիքեն օդանավը, որը թռիչք կատարեց Դյուսելդորֆով և Ֆրանկֆուրտով, դրանով իսկ սկիզբ դրեց Lufthansa AG-ն չվացուցակով ծառայություն կատարող առաջին ընկերությունը Գերմանիայում Երկրորդ աշխարհամարտից հետո: Այժմ ընկերության օդանավերը թռիչք են կատարում դեպի 78 երկիր 192 ուղղությունների վրա: 2006թ. ընթացքում հանգիստ ու ապահով տեղափոխել է ավելի քան 53,4 մլն ուղևոր: Այն Եվրոպայի ամենահաջող ավիաընկերություններից մեկն է, որը հետագա տարիների ընթացքում այն պետականից վերածվեց սեփականաշնորհված ընկերության[17]:

Նրա ապրանքանիշի առանձնահատկություններն են որակ, նորարարություն, ապահովություն և հուսալիություն: Ուղևորափոխադրումների հետ միասին ընկերությունը հաջողությամբ գործառնում է նաև տեխսպասարկման, սննդի նորագույն տեխնոլոգիաների բնագավառներում:

---

[13] «Հայաստանի Հանրապետություն», 2 դեկտեմբերի 2004թ.:
[14] Հասցե՝ ք.Երևան, Այգեստան 5փող., 15տուն, հեռ.՝ 55-43-05, ֆաքս՝ 55-43-35:
[15] "Frankfurter Allgemeine Zeitung", 2 oktober 2007.
[16] «Ազգ» (Հավելված), 3 հոկտեմբերի 2007թ.:
[17] ՀՀ ԱԳՆ Եվրոպայի վարչություն, արխիվ, գործ 197, թերթ 16:

Ընկերությունը 2003թվականից ղեկավարում է նրա նախագահ և գործադիր տնօրեն Վոլֆգան Սայրուբերը: Նա 2006թ. իր գործունեության եկամուտը հասցնել է մեկ միլիարդի:

Նշված ավիաընկերությունն ամենաերիտասարդ, բնապահպանության առումով լավագույն ընկերություններից է: Նրա ինքնաթիռների միջին թիվը 430 է, շահագործման միջին ժամկետը 10 տարի: Ընկերությունն օգտագործում է միայն վառելիք խնայող ինքնաթիռներ, միաժամանակ ակտիվորեն մասնակցում նմանատիպ շարժիչների մշակմանը[18]:

«Կանայան և Կո.» ընկերությունը հիմնադրվել է 1997թ. Հայաստանում: Նա ջեռուցման եվրոպական սարքավորումների մատակարարման և մոնտաժման ոլորտի առաջնակն է:

10 տարի է ինչ ընկերությունը հաջողությամբ համագործակցում է եվրոպական հանրահայտ ընկերությունների հետ: Այն գործում է օդարակման, ջեռուցման, օդափոխության, ջրամատակարարման սարքավորումների ոլորտում:

Հայաստանի Հանրապետությունում ընկերությունը համագործակցում է «Viessmann» և «Wilo» հանրահայտ գերմանական ընկերությունների հետ, «Կանայան և Կո.» ընկերությունը Հայաստանում «Viessmann» գերմանական ընկերության պաշտոնական գործընկերն է խորապես մասնագիտացած են ջեռուցման տեխնիկայի արտադրության բնագավառում:

«Կանայան և Կո.» աշխատակիցները նաև նրա նախագահ Բագրատ Կանայանը որակավորվել են գերմանական «Viessmann»-ի ակադեմիայում:

«Կանայան և Կո.» ընկերության բարձր վարկանիշը պայմանավորված է նրանով, որ նա մեծ պատասխանատվությամբ է վերաբերվում սպառողի պահանջների նկատմամբ, ազնվություն է դրսևորում գործընկերների և համագործակիցների հետ, ձգտում բիզնեսում հասնել կատարյալի: Արդյունքում շահում են թե՛ ընկերությունը, թե՛ նրա անդամները և թե սպառողները[19]:

Հայաստանում «Ադենա» ընկերությունը ներկայացնում է գերմանական բազմաթիվ ձեռնարկություններ և ֆիրմաներ, ներկրում նրանց արտադրանքը ՀՀ:

Հայաստանի Հանրապետությանն են ներկայացվում «Ադենայի» միջոցով Հալբերգը (Halberg GmbH) Սենթ Գոբեյն Գրուպի (Saunt Gobain) կազմում, Շոպֆը (Schopf GmbH), Ֆրիատեկ ԱԳ-ն (Friatec AG), Շմիդտը (Schmidt GmbH), Լինդեն (Linde GmbH), ենջինիրինգ Դոբերսեկը (Engineering Dobersek GmbH),

---

[18] «Ազգ» (Հավելված), 3 հոկտեմբերի 2007թ., էջ ը, Deutsche Lufthansa AG/Դոյչե Լյուֆթանզա Ակցիենգեզելշաֆթ, Երևան 0010, Ամիրյան փող. 1, 59-99-22/25, 59-99-23, lufthansa.yerevan@dlh.de:

[19] Ընկերության մասին՝ հասցե Ք. Երևան Կիևյան 12ա, բն. 1; հեռ.՝ 27-33-11, ֆաքս՝ 27-28-60, կայք www.kanayan.am:

Բադջեր Մետր Եվրոպան (Badger Meter Europ), էնդրես և Հաուզերը (Endress+Hauser), Մերդիան էնջինիրինգը (Merdian Engineering GmbH):

«Ադենա»-ն Հայաստան է ներկրում նաև գերմանական ընկերությունների օգտագործված տեխնիկա[20]: Ընկերությունը սպառողին միշտ առաջարկում է էժան, բարձրորակ և հուսալի գերմանական ապրանքներ[21]:

ՀՀ-ում բարձրորակ վաստակի համար «Զինջ» ընկերությունն այսօր էլ առաջատար է ՀՀ շուկայում[22], հիմնադրվել է 1990թվականին, զբաղվում՝ ջրամատակարարման, ոռոգման, հիդրոէներգետիկայի, ջրային ռեսուրսների պահպանման և կառավարման խնդիրներով, իրականացնում՝ նախագծային, խորհրդատվական և գիտահետազոտական բազմաթիվ և բազմաբնույթ աշխատանքներ:

B.I.D. (Business Initiative Directions) կազմակերպության միջազգային ընտրական կոմիտեի կողմից «Զինջ»-ը բարձրորակ ծառայություններ մատուցելու համար 2002թ. Ժնևում արժանացել է «Որակի միջազգային ոսկե Աստղ», 2003թ. Ֆրանկֆուրտում՝ «Որակի և տեխնոլոգիայի եվրոպական կամարի պլատինե կատեգորիայի», 2004թ. Փարիզում՝«Որակի միջազգային ադամանդե աստղ» և 2005թ. Լոնդոնում՝ «Ոսկե թուջ ադամանդե կատեգորիայում» մրցանակների:

Ընկերությունն աշխատում է ըստ ISO 9001:2000 ստանդարտի պահանջների և ունի գերմանական TÜV ընկերության տված հավաստագիր (?01 100 041311):

«Զինջ» ընկերությունը Հայաստանի շինարարների միության, Երևանի առևտրաարդյունաբերական պալատի և Կենտրոնական Ասիայի ու Կովկասի գլոբալ ջրային համագործակցության անդամ է: Ընկերությունը միաժամանակ համագործակցում է ինչպես տեղական, նույնպես և միջազգային կազմակերպությունների հետ:

2003-2004թթ. կատարվել են Երևանի ջրամատակարարման համակարգերի բոլոր քլորակայաններում ALLDOS Dosiertechnik և Lutz-JESCO GmbH ֆիրմաների արտադրության քլորացման սարքավորումների մոնտաժում, կարգաբերում, գործարկում, ինչպես նաև անձնակազմի ուսուցում է կազմակերպվել:

Գերմանիայի Բնության, շրջակա միջավայրի պահպանության և միջուկային ռեակտորների անվտանգության ֆեդերատիվ նախարարության աջակցությամբ 2003-2006թթ. Հարավային Կովկասի տարածաշրջանում իրականացվել է «Անդրսահմանային համագործակցություն Քուռ գետի ավազանում վթարային իրավիճակի նախազգուշացման նպատակով» ծրագրի աշխատանքներին մաս-

---

[20] Այդ մասին, ք Երևան Լալայանց 47ա, հեռ./ֆաքս 53-13-99:
[21] «Ազգ» (Հավելված), 3 հոկտեմբերի 2007թ., էջ թ.
[22] «Ազգ» (Հավելված), 3 հոկտեմբերի 2007թ.:

նակցել է «Զինջ» ՍՊԸ-ի փորձագետը, նա 2005թ. ծրագրի շրջանակներում վերապատրաստվել է Գերմանիայում՝ «Արտադրական օբյեկտների անվտանգության» թեմայով, որից հետո, որպես ուսանող, մասնակցել է Ուկրաինայում և Մոլդավիայում ուսումնական դասընթացներին:

Ընկերությունը ներկայումս գերմանական GITEC Consult GmbH և Sachsen Wasser GmbH ընկերությունների հետ միասին մասնակցում է գերմանական վերականգնման և զարգացման KfW բանկի ֆինանսավորմամբ «Լոռու (Վանաձոր) Շիրակի (Գյումրի) մարզերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնում» ծրագրի և «Ծրագրի իրականացման գրասենյակի կառավարման հմտությունների խորացում» բաղադրիչի իրականացմանը:

«Զինջ»-ը Լոռու և Շիրակի ջրմուղկոյուղի ընկերությունների համար խորհրդատվական ծառայություններ է իրականացնում առևտրային, կազմակերպչական, կառավարման, տեխնիկական և այլ ոլորտներում, մշակում առևտրային քաղաքականության, ռազմավարական և բիզնես ծրագրեր[23]:

Bayer AG կոնցեռնի «Դեղաբազա Երևան» ՍՊԸ-ն 2006 թվականի հոկտեմբերի 27-ին ինտեգրվեց Schering AG հայտնի դեղագործական ընկերության մեջ, արդյունքում ստացվեց նոր դեղագործական ընկերություն Bayer Schering Pharma AG անունով: Այս ինտեգրման գործընթացը երկու ընկերությունների առևտրային մշակույթների միասնությունն է, ինչպես նաև բիզնես գործընկերների և համագործակիցների հանդեպ արդար և պատասխանատու քաղաքականությունը: Միավորումը հնարավոր դարձրեց ամուր դիրք ունենալ մասնագիտացված շուկայում և կօգնի ընդլայնելու դեղորայքային շուկան:

Միավորումից հետո Հայաստանում Bayer Schering Pharma AG-ի երկու ներկայացուցիչներ են «Դեղաբազա Երևան» ՍՊԸ–ն, որը Bayer ֆիրմայի պաշտոնական ներկայացուցիչն ու մատակարարն է և «ՔՈՄԱԹԱՐ» ընկերությունը, որը Schering Pharma դեղորայքի ներմուծողն ու մատակարարն է[24]:

«Ֆրեզենիուս Մեդիքլ Քեյր» ընկերության կողմից 2007 թվականին Ղափանում բացվեց հերթական դիալիզային կենտրոնը, համալրված «Ֆրեզենիուս Մեդիքլ Քեյր»-ի սարքավորումներով: Այս կենտրոնը թվով 8 –րդն է, որոնցից 7-ը տեղավորված է Հայաստանում, մեկը՝ Լեռնային Ղարաբաղում: Կենտրոնի նպատակն է օգնել երիկամային անբավարարվածությամբ տառապողներին, երկարացնելու նրանց կյանքը:

---

[23] «Ազգ, Հավելված», 3հոկտեմբերի 2006թ., էջ ժբ, ընկերության հասցեն է ք. Երևան, վարդանանց 8, հեռ.՝ 54-10-02, ֆաքս՝ 54-27-05, էլ.փոստ imfo@jinconsult.com, www.jinconsult.com:

[24] «Ազգ, Հավելված», 3 հոկտեմբերի 2007թ. էջ զ, հասցե՝ ք.Երևան, Հ.Քոչարի 17, հեռ.՝ 22-12-22, 27-18-56, ֆաքս՝ 27-02-38, էլ.փոստ՝ abishar@arminco.com:

Ընկերության տնօրեն Վ. Փափազյանը ասում է.«Ես, իհարկե, կցանկանայի որպեսզի մարդիկ չհիվանդանային այս սարսափելի հիվանդությամբ և կարիք չլիներ նոր կենտրոններ բացել, բայց ցավոք ամբողջ աշխարհում, ըստ վիճակագրության նկատվում է թե՛ հիվանդների, և թե՛ կենտրոնների թվի աճ»: Մտադրություն կա հաջորդ կենտրոնը բացել Սևան քաղաքում:

Ընկերությունը դիալիզի արտադրանքի և երիկամի փոխարինման թերապիայի գծով աշխարհի խոշորագույն մատակարն է: Նա իր ներկայացուցչություններն ունի աշխարհի ավելի քան հարյուր երկրներում՝ 47000 աշխատատեղերով[25]:

Schwarzkopf Professional ընկերությունն ավելի քան մի դար է, ինչ պահպանում է իր առաջատար դիրքը վարսավիրական շուկայի ընկերությունների շրջանակներում: Այն ներկայացված է աշխարհի 90 երկրներում և համագործակցում է 160 հազար վարսավիրների և գործընկերների հետ: Համագործակցելով վարսավիրների հետ մշակում է անհատական կոնցեպցիաներ ամեն մի գեղեցկության սրահի համար:

Վարսավիրական ընկերությունը (Շվարցկոպֆ) ներկայացնում է «IDEA-S» (Այդիա-ես) ՍՊԸ-ն: Այն գործում է 2004թ. սեպտեմբերի 1-ից:

«IDEA-S» ընկերությունն օգնում է որպեսզի հայ վարսավիրները հնարավորություն ստանան քայլել ժամանակի պահանջներին համընթաց և հաճախորդին հասցնեն աշխարհի լավագույն նորություններին[15]:

Գեղեցիկը սահման չունի կարգախոսով «Թալիսման» ընկերությունը WELLA և LONDA պրոֆեսիոնալ ապրանքատեսականիների պաշտոնական ներկայացուցիչն է Հայաստանում, գերխնդիրն այն է որպեսզի որակը հասցվի առավելագույնի: Ընկերությունը համագործակցում է գերմանական հանրահայտ ֆիրմաների հետ, ձգտում հայ սպառողին հասցնել գերմանական լավագույն ապրանքատեսականին:

7-րդ տարին է, ինչ Հայաստանում գործում է WELLA ուսումնական կենտրոնը, որը սովորեցնում է վարսավիրություն, դիմահարդարություն, մատնահարդարում, բուսական բուժում և անգլերեն լեզու: Կենտրոնն ուսուցում է կազմակերպում նաև սկսնակների համար:

Վերջին սեմինարը սկսվել է 2007թ. հունիսի 7-8-ին տեսական և պրակտիկ մասով Գերմանիայից ժամանած առաջնակարգ մարզիչների մասնակցությամբ[26]:

---

[25] Հասցե՝ ք.Երևան, Մաշտոցի 6, բն. 53, հեռ./ֆաքս. 52-45-54, էլ.փոստ՝ frese@armencell.am:

[15]Հասցեն է, Երևան Նոր Արեշ 35, 2Ա շենք (մեծածախ առևտուր), Պուշկինի 40, հեռ. 53-33-58: 53-33-12, էլ.փոստ՝ idea@xter.net:

[26] Հասցե՝ ք.Երևան, Չաքիյան 10, հեռ.՝ 56-22-42, 56-06-75, 51-90-28, էլ.փոստ՝ talis@arminco.com:

Գերմանական հանրահայտ Չիբո (Tchibo) ֆիրման տեղավորված է Մասշտաց 37 հասցեում, հիմնադրվել է 2006թ. ընկերության փոխտնօրեն Նարինե Գրիգորյանը նշել է. «Սկզբնական շրջանում մեր հաճախորդները, նրանք էին ովքեր մեր ֆիրմային ծանոթ էին եվրոպական երկրներից, այժմ այն մատչելի է դարձել բոլոր երևանցիների համար»[27]:

Ընկերությունն առաջարկում է առողջության համար կարևոր ապրանքներ: «Չիբոն» աշխարհում հայտնի է որպես որակի չափանիշ[28]:

Իր պարտականությունները սրբորեն է կատարում «Ավտոհաուս» ՍՊԸ-ն: Նա Porsche ընկերության ավտոմեքենաների միակ ներկրողն է Հայաստան: Ավտոգնողը կարող է ծանոթանալ նշված շարքի մեքենաների վերջին նորություններին, ձեռք բերել օրիգինալ պահեստամասեր, խնամքի նյութեր, հուշաևվերներ, մեքենաների փոքր մոդելներ և այլն[29]:

Պրոֆեսոր ֆերդինանդ Պորշեն 1967թ. ստեղծեց մի նոր կոնցեպտ, որն այսօր իր 6-րդ սերնդի ներկայացուցիչներով իսկական լեգենդ է:

«Սլավ Մոթորս» ՓԲԸ-ն Հայաստանում ներկայացնում է AUDI-ին: «Սլավ Մոթորս» ընկերությունը հիմնադրվել է 2004թվականին, որը գերմանական AUDI AG ընկերության գլխավոր պաշտոնական ներկայացուցիչն է Հայաստանում: Նա ներկրում ու վաճառում է AUDI մակնիշի գործարանային նոր ավտոմեքենաներ և պահեստամասեր: Մեքենաներ, որոնք հարմարեցված են ՀՀ-ի ճանապարհային և վառելիքային պայմաններին: Տեխսպասարկումն իրականացնում են Գերմանիայում վերապատրաստված հայ մասնագետները:

Այդ մեքենաներից սենսացիոն մոդել է սպորտային և էլեգանտ Allroad Quattro-ն, որը ներշնչում է վստահություն և ներքին ուժ: Այս մեքենան նախատեսված է ընտանիքի համար՝ կյանքի բոլոր իրավիճակներում: Այդքանից հետո դարձյալ շարունակվում է AUDI-ի մոդելային շարքի թարմացումը[30]:

«Սլավ Մոթորս» ընկերությունը 2007 թվականին բացված իր նոր ցուցասրահով հայ ավտոսիրողներին հասանելի է դարձնում AUDI-ի շարքի ողջ տեսականին: 2008 թվականի գարնանը գերժամանակակից նորագույն սարքավորումներով զինված տեխնիկական սպասարկման կենտրոնի շահագործման ծրագրով թեթևացվել է AUDI ավտոմեքենաների վարորդների հոգսը՝ հավատարիմ «AUDI կատարելիությունն ունի իր անունը» կարգախոսին[31]:

---

[27] «Ազգ, Հավելված», 3 հոկտեմբերի 2007թ. էջ է, էլ փոստ :
[28] Հասցե՝ ք.Երևան, Մաշտոցի 37, հեռ.՝ 53-70-13, էլ.փոստ՝ hvhmanagement@email.com, www.chibo.de
[29] Խանութ-սրահի հասցեն է Արամի 2, Երևան 0010, հեռախոս 56-52-18,հ/ֆ 58-32-78, էլ.փոստ՝ porsche@porsche.am:
[30] Հասցե՝ ք.Երևան, Ծովակալ Իսակովի 22/2, հեռ.՝ 73-94-00, տեխսպասարկման կետ՝ հեռ.՝ 73-94-03, ցուցասրահ, ֆաքս՝ 73-94-01, էլ. փոստ՝ audi@audi.am:
[31] «Ազգ, Հավելված», 3 հոկտեմբերի 2007թ. էջ դ

«Եվրոպել» ընկերությունը Հայաստանում ներկայացնում է OPEL ապրանքանիշը, որը 2007 թվականին պայմանագիր է կնքել «OPEL» ընկերության հետ՝ դառնալով նրա մակնիշի մեքենաների բացառիկ ներկայացուցիչը Հայաստանում:

«Եվրոպել»-ը ձգտում է սրբությամբ պահպանել և զարգացնել OPEL-ի ավանդույթները Հայաստանում: Այժմ ընդանում են նոր սերվիս կենտրոնի շինարարական աշխատանքները Շիրակ 39 հասցեում, որը կավարտվի ընթացիկ՝ 2008 թվականին[32]:

Մայր Հայաստանում կան բազմաթիվ ու բազմապիսի մեքենաներ, այդ վկայում է, որ նրան հետաքրքրում է արտաքին շուկան, որից սիստեմատիկաբար նա օգտվում է: Սակայն Հայաստանին հետաքրքրում է ոչ միայն տեխնիկական հնարավորությունները և շարժիչի հզորությունը, այլև նրա վարկանիշն ու գրավչությունը: Ձևավորվել է բավականին մրցունակ շուկա:

Հայաստանում այսօր շատացել են ոչ միայն արտասահմանյան մեքենաները, այլև համապատասխան ընկերությունների ներկայացուցիչները: Այդ ընկերություններից են «Եվրոմոթորս»-ը, «Ավանգարդ Մոթորս»-ը, «Մուրան»-ը, «Գոլեմ»-ը և այլն:

Այս կազմակերպությունների կազմում շարունակում է գործել «Եվրովագեն» ՍՊԸ-ն: Այս կազմակերպությունների շարքում երկու տարուց ավելի է ինչ գործում է «Եվրովագեն» ՍՊԸ-ն, որը Հայաստանում ու Լեռնային Ղարաբաղում «Ֆոլկսվագեն» ԲԸ-ի ապրանքանիշի կրող արտադրանքների պաշտոնական և բացառիկ ներկրող–իրացնողն է: Նրա ղեկավարներն առաջնակարգ խնդիր են դարձրել ներկայացնել միայն բարձրակարգ ավտոմեքենաներ, որոնք միաժամանակ հասանելի են ժողովրդական բոլոր զանգվածների համար, այսինքն՝ գինը մատչելի լինի, տեխնիկական սպասարկումը՝ բարձրակարգ, այնքանով, որ համապատասխանի միջազգային չափանիշներին:

Ընկերությունը հաջողությամբ է կատարում իր առջև դրված խնդիրները: Շնորհիվ տեխնիկական համագործակցության ստեղծվել է գիտափորձարարական բազա, մտահոգված է իր կադրերի մասնագիտական, որակական աճով: Աշխատակիցներին հաճախ են գործուղում Գերմանիա որակավորվելու:

Հավատարիմ ժողովրդավարություն վայելող իր կարգախոսին և «Ֆոլկսվագեն»-ի ավանդույթներին, ընկերությունը լուրջ ավանդ ունի մի շարք բարեգործական միջոցառումներում որպես հեղինակ և համահեղինակ[33]:

Ընկերությունը ձգտում է ավելի սերտացնել Հայաստանի հետ իր կապերը, որպեսզի դրանով իսկ «Ֆոլկսվագեն»-ի լավագույն ավանդույթները փոխանցի

---

[32] OPEL մակնիշի մեքենաների մասին հիմնական տեղեկություններ կարելի է ստանալ Գ.Լուսավորիչ 7 հասցեում, հեռ.՝ 54-40-60, ֆաքս՝ 54-44-04 կամ www.opel.ru և www.opel.com կայքերից:

[33] «Ազգ, Հավելված», 2 հոկտեմբերի 2004թ. էջ բ:

Հայաստանի Հանրապետությանը, դառնա նրա զարգացման շարժիչ ուժերից մեկը[34]:

Հայաստանում «Դայմլեր Քրայսլեր» կոնցեռնի միակ պաշտոնական ներկայացուցիչն է Ավանգարդ Մոթորս ՍՊԸ-ն, որը 2004 թվականից Հայաստանում ներկայացնում է «Mercedes-Benz»-ի ապրանքանիշը, նրան նախորդել էր «Ինտերմոտոր» ընկերությունը 1988թ.[35]: Նա 2007 թվականից հայ ավտոմեքենասերներին է ներկայացնում նոր C դասն՝ իր երեք ինքնատիպ գծերով՝ CLASSIC, ELEGANT, AVANTGARDE: Այս երեքն էլ ունեն Mercedes-ի լավագույն հատկանիշները, սակայն նրանց բոլորին միավորում է նույն բարձրակարգ տեխնիկական հնարավորությունները:

2007թ. ամերիկյան շուկայում ամենամյա հետազոտություններ կատարող J. D. Power և Associates կազմակերպությունները ուսումնասիրությունների արդյունքում «Mercedes-Benz» ընկերությանն արժանացրել են երեք ոսկյա պարգևի բարձրորակ արտադրանքի համար: Մրցանակները տրվել են E, S և SL դասերին[36]:

«Եվրոմոթորս» ընկերությունը Հայաստանում «BMW Group»-ի բացառիկ ներկրողն ու պաշտոնական ներկայացուցիչն է: Այն գործում է 1998թ. և գնողին է ներկայանում նոր մոդելի մեքենաներ՝ «BMW Group»-ի անընդհատ նորացվող գամմայից: Ընկերությունը հաճախորդների համար դյուրին է դարձնում ավտոմեքենաների գնումը, ապառիկի ձևավորումը, հետերաշխիքային սպասարկումը, ավտոտեխսպասարկումը և այլն:

Այդ մեքենաները ավտոարդյունաբերության վերջին կանոնների արտադրանք են՝ արտաքին ու ներքին հարուստ տվյալներով[37]:

Այսպիսով, այդ ընկերությունները սերտացնում են հայ-գերմանական տնտեսական հարաբերությունները: Գերմանական ընկերությունների միջոցով Հայաստանի Հանրապետության բնակչությունը ծանոթանում է տեխնիկական առաջադեմ նորույթներին: Ընկերությունների հետևողական աշխատանքի արդյունքն են ջրային, էլեկտրոէներգիայի, պղնձամոլիբդենի, սննդարդյունաբերության, բժշկության, մեքենաշինության և այլ բնագավառներում երկու երկրների միջև փոխհարաբերությունների շահավետ և նպաստավոր ձեռքբերումները:

ՀՀ-ի և ԳԴՀ-ի միջև տնտեսական հարաբերությունները զարգանում են և կշարունակեն զարգանալ, ինչպես վկայում են փաստերը, վերելքի ուղիով:

---

[34] Ընկերության հասցեն է Երևան, Լենինականի 12, հեռախոս՝ 39-07-76, ֆաքս՝ 35-80-83, www.eurowagen.am:

[35] «Ազգ, Հավելված», 1 հոկտեմբերի 2005թ. էջ գ:

[36] Ընկերության հասցեն՝ ք.Երևան, Գայի պողոտա 14/3, հեռ.՝ 66-88-00, ֆաքս՝ 66-89-00, էլ.փոստ՝ sales@mercedes-benz.am, www.mercedes-benz.am:

[37] Ընկերության գրասենյակը գտնվում է Երևան Գրիգոր Լուսավորիչի փ. հ. 7 հասցեում, հեռ.՝ 54-40-80, 54-80-60, ֆաքս՝ 54-44-04, էլ.փոստ՝ info@euromotors.am, www.bmw.am: